

Մարզպետարանում կազմակերպվեց քննարկում սոցիալական դեպքերի վարման վերաբերյալ

04.08.2017

„Վորլդ Վիժն Հայաստան,, Գեղարքունիքի մարզի „Երեխաների պաշտպանության և կրթության ծրագրերի շրջանակներում օգոստոսի 4-ին Գեղարքունիքի մարզպետարանում տեղի ունեցավ աշխատանքային հանդիպում կազմակերպության ներկայացուցիչների և մարզի հինգ տարածաշրջանների սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների աշխատակիցների մասնակցությամբ: Հանդիպումը վարում էր Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանը: Ողջունելով հանդիպման մասնակիցներին, մարզպետի տեղակալը կարևորեց „Վորլդ Վիժն Հայաստան,, Գեղարքունիքի մարզային մասնաճյուղի դերն ու նրա կողմից կատարված աշխատանքները մարզի տարածաշրջաններում, հույս հայտնելով, որ համագործակցությունը կազմակերպության հետ աստիճանաբար արդյունավետ ընթացք է ապահովում: Հանդիպման ընթացքում „Վորլդ Վիժն Հայաստան,, Գեղարքունիքի մարզի „Երեխաների պաշտպանության և կրթության ծրագրերի,, համակարգողի կողմից ներկայացվեց տեղեկատվություն՝ կազմակերպության կողմից իրականացված սոցիալական դեպքերի վարման վերաբերյալ, այնուհետև կողմերի ներկայացուցիչների միջև տեղի ունեցան ակտիվ քննարկումներ սոցիալական դեպքեր գրանցելու, դրանք վարելու և նշված գործընթացներում շահագրգիռ կողմերի միջև ակտիվ համագործակցություն ծավալելու վերաբերյալ: Հանդիպման ընթացքում քննության առնվեց նաև սույն թեմայի առնչությամբ տեղական մակարդակում շահերի պաշտպանության ծրագրի ներկայացման, մարզի տարածքում գործող ՄԱՏԳ-ների վերաբերյալ քաղաքացիների կողմից բարձրացված խնդիրները: „Մենք համագործակցված և լուրջ ուսումնասիրություններ պետք է կատարենք: Բացահայտենք և ներկայացնենք սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքներին, փորձելով ընդառաջել նրանց՝ ըստ առաջնահերթությունների: Մա արդեն մեզ համար սոցիալական դեպք կհամարվի, որի վարման և դրա լուծման ուղղությամբ պետք է գիշեր ու գոր համագործակցված աշխատանք կատարենք: Այս դեպում արդյունքը ակնառու կլինի,, - իր եզրափակիչ խոսքում նշեց Անդրանիկ Հակոբյանը: Հանդիպման մասնակիցները սոցիալական դեպքերի վարման վերաբերյալ ներկայացրին նաև իրենց փորձը, հանդես եկան գործնական տարաբնույթ առաջարկություններով: